

ՀԱՅԵՐԸ ՀՈԼԱՆԴԱՅՈՒՄ

Հայ-հոլանդական հարաբերությունների արմատները հասնում են մինչև չորրորդ դար, երբ Նիդերլանդներ է գալիս ծագումով հայ հոգևորական Սուրբ Սերվատիոսը (ըստ որոշ աղբյուրների նրա անունը Սրբատիոս-Սերովբե է, իսկ հոլանդերեն նրան կոչում են նաև Սինտ Սերվաս): Լատինական գրավոր աղբյուրներից հայտնի է, որ նա եղել է Նիդերլանդների առաջին եպիսկոպոսը և վախճանվել է 384 թ. Նիդերլանդներում: Նրա մասունքները պահվում են Մաստրիխտի նշանավոր Սինտ Սերվասկերկ եկեղեցում:

Հոլանդացիների և հայերի կապերը նոր ձև են ստանում Խաչակրաց արշավանքների ժամանակ: Կիլիկիայի թագավորության անկումից հետո աճում է հայերի հոսքը դեպի եվրոպական երկրներ, այդ թվում նաև Նիդերլանդներ: Այդ ժամանակներից մեզ են հասել որոշ գրառումներ: Գ. Աբգարյանը նշում է, որ Ամեստերդամ այցելած հայ վաճառականների մասին տեղեկություններ են գրանցվել 1560-65 թթ.: Շահ Աբբասի արշավանքներից և բռնագաղթից հետո, 17-րդ դարի առաջին կեսերին Նիդերլանդներ են գաղթում փոքր թվով ջուղայեցիներ: Ռ. Բեկիուսը, որն ուսումնասիրել է այդ ժամանակաշրջանի նոտարական արձանագրությունները, եկել է այն եզրակացության թե առաջին հայերը Նիդերլանդներ են եկել շուրջ 1627 թ.: 1650 թ. հետո հաճախակի են հիշատակվում հայկական անուններ: Այդ ժամանակաշրջանի հայերի վերջին ներկայացուցիչը համարվում է Յոհաննես դի Արոթյանը (Հովհաննես Հարությունյան), որը ծնվել է Ամստերդամում 1774 թ. և վախճանվել այնտեղ՝ 1845 թ.: 1660-ական թ. Ամստերդամում բնակվել են 66 հայեր, իսկ 1715 թ.՝ 71: Այդ ժամանակաշրջանի արձանագրություններում կան ընդհանուր թվով 800 հայկական անուն:

17-18-րդ դարերի Ամստերդամի հայկական համայնքի ամենամեծ ծառայությունը հայ նշակույթին եղել է 18 անուն հայերեն գրքերի հրատարակումը: 1660-1718 թթ. այստեղ գործել է հայկական տպարան, որի հիմնադիրն է եղել Մատթեոս Ծարեցին: Ամստերդամում հրատարակված առաջին հայերեն գիրքը Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» գործն է, որի տպագրությունը ավարտվել է 1661 թ. Մատթեոս Ծարեցու մահից հետո: 1664 թ. էջմիածնի հանձնարարությամբ Նոր Ջուղայից Ամստերդամ է գալիս հայ նշակույթի ականավոր գործիչ Ոսկան Երևանցին, որը ստանձնում է տպարանի աշխատանքները: Նրա անխոնջ աշխատանքով 1666-1669 թթ. հրատարակվում են 16 անուն գիրք, որոնց մեջ իր ուրույն տեղն ունի Աստվածաշնչի առաջին հայերեն տպագրությունը 1666 թ.: Այնուհետև Ամստերդամում հայ տպագրության գործով են զբաղվել Մատթեոս, Ղուկաս և Թոմաս Վանանդեցիները, որոնք 1695 թ. հրատարակել են Սովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը և «Համատարած աշխարհացոյց» քարտեզը:

18-րդ դարում Ամստերդամում աշխատել է հայոց Սուրբ Հոգի եկեղեցին, որի շենքը կառուցվել է 1714 թ. հոլանդական ոճով և պահպանվում է առ այսօր:

Ամստերդամի հայկական գաղութի անկումից հետո, մինչև 20-րդ դարի երկրորդ կեսերը Նիդերլանդներում մեծ թվով հայեր չեն բնակվել: Նրանք եղել են հիմնականում ինդոնեզահայ վաճառականներ, որոնք խառն ամուսնության պատճառով ունեցել են իրենց երկրորդ բնակվայրը Նիդերլանդներում:

Համիդյան ջարդերի և Մեծ Եղեռնի հետևանքով արևմտահայերի մի մասը ապաստան է գտել Նիդերլանդներում, սակայն այդ հայերից շատերը թողել են Նիդերլանդները և հաստատվել այլ երկրներում: Հոլանդական մամուլը և հասարակական կարծիքը խիստ դատապարտել է 1895-96 թթ. հայկական կոտորածները, իսկ 1899 թ. Ամստերդամում, հակառակ հոլանդական իշխանությունների հարուցած խոչընդոտների, հրատարակվել է Մինաս Չերազի «խաղաղության համաժողովը և հայոց կոտորածը» աշխատությունը: Առաջին աշխարհամարտից անմիջապես հետո Նիդերլանդներում հիմնվել է «հայ փախստականների օգնության հոլանդական հանձնախումբ», որի մեջ

տեղ են գրավել հոլանդացի պետական և հասարակական ականավոր գործիչներ: Այդուհանդերձ Նիդերլանդների իշխանությունները վարել են թրքասեր քաղաքականություն և պաշտոնապես չեն դատապարտել հայերի նկատմամբ կիրառված թուրքական բռնությունները և հակված չեն ճանաչելու հայոց ցեղասպանությունը: Այդ կեցվածքը նորից ի հայտ եկավ 2000-2001 թթ. հայոց ցեղասպանությանը նվիրված հուշաքարի կանգնեցման դիմումի քննարկման ընթացքում: Այդ հուշաքարը, որ տեղադրվեց 2001 թ. ապրիլի 24-ին Ասենի գերեզմանատանը բարդ ընթացակարգի միջով անցնելուց հետո, նիդերլանդական իշխանությունների պահանջով հարկադրաբար կրում է 1910-1920 թթ. վախճանված հայոց նախորդների հիշատակին արձանագրությունը:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին գերմանական զինված ուժերը հայ ռազմագերիներից կազմված 812-րդ գունդը տեղակայել էին Նիդերլանդների Սխաուվեն-Դոյվելանդ կղզում: Նրանց դերը ծովեզրյա զինված ուժերին մատակարարություն հասցնելն էր: Հայեր էին տեղադրված նաև Ջեռուվական այլ կղզիներում: Հայտնի է, որ այդ հայերից շատերը համագործակցել են հոլանդական ընդհատակյա շարժման հետ և որոնցից 7-ը դաշնակիցներին միանալու անհաջող փորձից հետո գնդակահարվել են գերմանացիների կողմից Միդդելհարնիսում՝ 1944 թ. դեկտեմբերի 9-ին: Անհայտ է թե որտեղ են հաստատվել այդ գունդի այլ հայ զինվորները Նիդերլանդների ազատագրումից հետո, սակայն նրանց երեխանները մնացել են Նիդերլանդներում իրենց հոլանդացի մոր մոտ:

1940-ական թվականների վերջերից Նիդերլանդների հայ համայնքը համալրվել է տարբեր երկրներից արտագաղթած հայերով:

1940-ական թվականների վերջերին, Նիդերլանդների գաղութային լծից Ինդոնեզիայի անկախացումից հետո, այնտեղ բնակվող հայերի մի մասը հաստատվեց Նիդերլանդներում: Ունենալով հոլանդական դաստիարակություն այդ հայերը կարողացան արագ համակերպվել նոր միջավայրի հետ և նրանց փորձերը հայկական ազգային մշակութային օջախներ հիմնելու ուղղությամբ չհասան ցանկալի արդյունքների:

1950-ական թվականների կեսերին Նիդերլանդների կառավարությունը Նիդերլանդներ է հրավիրել նախնայան անձնագրով Հունաստանում ապաստանած մի քանի արևմտահայ ընտանիք և նրանց բնակեցրել Ամերսֆորտ քաղաքում:

1960-ական թվականներին, որպես ժամանակավոր աշխատավորներ, Նիդերլանդներ են եկել փոքր թվով հայեր Թուրքիայից և Իրանից: Նրանցից շատերը հետագայում հաստատվել են Նիդերլանդներում: 1970-ական թթ. կեսերից սկսած նրանց են միացել իրենց գերդաստանի անդամները, որոնք և կազմում են ժամանակակից հոլանդահայության զգալի մասը և եկել են գլխավորապես Դիարբեքիից, Շիրնակից, Յոզգատից և արևելյան Թուրքիայի այլ քաղաքներից: Նրանցից մի մասը հաստատվել է Ամստերդամում և Ամստերդամի արվարձան Դիմենում, իսկ մյուս մասը՝ Ալմեյդում:

1960-ական թվականներից հետո Միջին Արևելքի տարբեր երկրներում և Հայաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների, տնտեսական դժվարությունների և պատերազմների հետևանքով Նիդերլանդներում ապաստան են գտել հայ փախստականներ Թուրքիայից, Լիբանանից, Իրանից, Իրաքից, Սիրիայից և վերջին տարիներին Հայաստանից:

Հայերը Նիդերլանդներում հիմնականում կենտրոնացած են Ամստերդամում, Ալմեյդում և Ամերսֆորտում: Ավելի քիչ թվով հայ ընտանիքներ են բնակվում երկրի այլ քաղաքներում՝ Հաագայում, Դորդրեխտում, Լեյդենում, Ռոտերդամում, Ասենում և այլուր:

Նիդերլանդներում բնակվող հայերի թվի նասին ստույգ տվյալներ չկան: Հայկական հաստատությունների մոտ գոյություն ունեցող հասցեների հիման վրա կարելի է ասել, որ 1970-ական թթ. վերջերին Նիդերլանդներում բնակվում էր շուրջ 3000 հայ, 1990-ական թթ. սկզբին շուրջ 4000 հայ, իսկ 2000 թ. շուրջ 7000 հայ:

Սիդերլանդներում բնակվող հայերը պատկանում են միջին և բարձր դասին: Հին և նոր ձեռնարկատերերից և վաճառականներից բացի այստեղ եղել են և կան արհեստավորներ, մտավորականներ, ինժինեռներ, ճարտարապետներ, բժիշկներ, իրավաբաններ, բարձրագույն դպրոցի դասախոսներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, արվեստի ու գիտության գործիչներ:

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սիդերլանդներում գոյություն չունի հայ համայնքը միավորող կենտրոնական մարմին: Հայկական մշակութային, կրոնական և կրթական միջոցառումներ կազմակերպում են զանազան քաղաքներում գործող մշակութային, հասարակական և կրոնական միությունները և հաստատությունները:

Նոր ժամանակների հոլանդահայ առաջին կազմակերպությունը ստեղծվել է 1660-ական թթ. սկզբին և կրել է Հոլանդահայերի ըկերկցություն (Armenisch Genootschap in Nederland) անունը: Այդ ընկերակցությունն, որ իր մեջ է ընդգրկվել ամբողջ հոլանդահայ գաղութը, կազմակերպել է մշակութային, հասարակական միջոցառումներ, եկեղեցական արարողություններ, ունեցել է իր երգչախումբը և պարբերաթերթը: Այդ ընկերակցության աշխատանքները դադարել են 1660-ական թթ. վերջերին: Մինչև 1669 թ. Ամերսֆորտում հիմնվել է «Ամերսֆորտի Հայ օժանդակ միությունը», որը 1972 թ. պաշտոնապես զրանցվել է պետության մոտ և 1975 թ. Ամերսֆորտի քաղաքապետարանից ստացել է իր սեփական շենքը, որն այժմ շահագործում է այդ միության ժառանգորտ՝ Ամերսֆորտի «Հոլանդահայ միությունը» (1978 թ.): Այդ շենքը կարելի է համարել արդի հոլանդահայ գաղութի առաջին մշակութային օջախը: Այնուհետև հիմնվել են հետևյալ հայկական կազմակերպությունները՝ «Ամերսֆորտի հայ երիտասարդաց կենտրոն» (1974 թ.), «Հոլանդահայ միություն - Ամստերդամ» (1975 թ.), «Ալմեյտյահայ միություն - Ալմեյտ» (1978 թ.), «Հոլանդահայ երիտասարդաց միություն - Ալմեյտ» (1970 թ.), որը հետագայում վերանվանվել է «Երևան մշակութային հաստատություն - Ալմեյտ», «Արարատ ընկերային մշակութային հաստատություն - Ամստերդամ» (1979 թ.), «Հոլանդահայ Աբովյան մշակութային միություն - Հաագա» (1984 թ.), «Հոլանդահայ դեմոկրատական խմբակցություն - Հաագա» (1987 թ.), «Անի հայ մշակույթի տուն - Դորդրեխտ» (1988 թ.), «Մասուն մշակութային միություն - Ռոտտերդամ» (1992 թ.), «Հայկական կլոր սեղան» (1993 թ.), «Մասիս մշակութային միություն - Ասեն» (1997): Վերջին 5 տարվա ընթացքում հիմնվել են ՀՀ-ի կողմից ղեկավարվող ակումբների մասնաճյուղեր՝ Հոմեթմեն, Հայ դատի հանձնախումբ, Հայ տուն և այլն: Ամերսֆորտի Հոլանդահայ միությունից բացի իրենց սեփական ակումբն ունեն էրևան մշակութային հաստատությունը Ալմեյտյում, Արարատ մշակութային հաստատությունը Ամստերդամում, Հոլանդահայ Աբովյան մշակութային միությունը Հաագայում: 1988 թ. Հայաստանում տեղի ունեցած ահավոր երկրաշարժից և դրան հաջորդող Հայաստանի տնտեսական շրջափակման տարիներին Սիդերլանդներում կազմվել են աղետի գօտուն օգնության կոմիտե, Օգնություն Հայաստանին հաստատություն, Համահայկական հիմնադրամի Սիդերլանդների մասնաճյուղ:

ԵԿԵՂԵՑԻ

16-18-րդ դդ. Սիդերլանդների հայ համայնքն ունեցել է իր հոգևոր հովիվը, իսկ 1714 թ. Ամստերդամում կառուցվել է Սուրբ Հոգի հայ առաքելական եկեղեցին: Ամստերդամի հայ համայնքի վերացման պատճառով 1874 թ. եկեղեցու շենքը աճուրդով վաճառվել է օգոստինյան կույսերի միաբանությանը: Մինչև 1985 թ. եկեղեցու շենքը ծառայել է որպես կաթոլիկական տարրական դպրոց: 1986 թ. այդ շենքը վերագնվել է հոլանդահայ համայնքի կողմից և հարկավոր վերանորոգումից հետո 1989 թ. օժվել որպես հայ առաքելական եկեղեցի: 1991 թ. Ալմեյտի հայ համայնքը գնել է նախկին դպրոցի մի շենք, որը 1993 թ. օժվել է որպես հայ առաքելական եկեղեցի և կրում է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ անունը: 2001 թ. Ամստերդամում և Ալմեյտյում գործում են Ս. Հոգի և Ս. Գրիգոր Լուսավորիչ հայ առաքելական եկեղեցիները, որոնք պատկանում են Ս. Էջմիածնի թեմին: Հոլանդահայ գաղութն ունի իր հոգևոր հովիվը: Մինչև 1989 թ. Սիդերլանդների տարբեր հայաշատ քաղաքներում գործել են եկեղեցական խորհուրդներ,

որոնք պարբերաբար կազմակերպել են եկեղեցական արարողություններ և այլ տոնական միջոցառումներ:

ԴՊՐՈՑ

Նիդերլանդներում չկան հայկական դպրոցներ: Հայոց լեզվի կիրակնօրյա դասընթացներ են կազմակերպում տարբեր քաղաքներում գործող հայկական մշակութային, հասարակական և կրոնական կազմակերպությունները: Բացի այդ, հոլանդական տարրական դպրոցներում հայ երեխաները կարող են ստանալ մայրենի լեզվի դասեր, եթե նրանք որոշակի թիվ են կազմում տվյալ դպրոցում: Այդպիսի դպրոցներ կան Ալմեյդաում միայն:

Լեյդենի համալսարանն ունի հայագիտական ամբիոն:

ՍԱՍՈՒԼ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդի հոլանդահայ գաղութի կազմավորման առաջին իսկ փուլում հայտնվել են միութենական կամ առանձին թերթեր: 1962-67 թթ. պարբերաբար լույս է տեսել Հոլանդահայերի ընկերակցության բյուլիտենը հոլանդերենով: 1975 թ. Հոլանդահայ միությունը հրատարակել է «Տեղեկագիր» հայերենով և հոլանդերենով: 1978-79 թթ. Հաագայում հրատարակվել է «Դեպի Հայրենիք» անսաթերթը հայերեն, հոլանդերեն և թուրքերեն լեզուներով, իսկ 1979-81 թթ. Ալմեյդաում լույս է տեսել «Պայքար» անսագիրը հայերենով և հոլանդերենով: 1984 թվականից Հոլանդահայ Արմյան մշակութային միությունը հայերենով և հոլանդերենով հրատարակել է «Քնար» անսաթերթը (1984-88 թթ.), «Պարապ վախտի խաղալիք» անսաթերթը (1995-1998), «Լուրեր» միութենական թերթը (2000 թվականից): 1980-90-ական թվականներին որոշ ժամանակահատվածում պարբերաբերթ են հրատարակել՝ Հայ դեմոկրատական խմբակցությունը («Տեղեկատու», հայերեն-հոլանդերեն-անգլերեն), Արարատ ընկերային մշակութային հաստատությունը («Տեղեկագիր», «Լուրեր Հայրենիքեն», հայերեն-հոլանդերեն), Ամերսֆորտի հոլանդահայ միությունը («Լրաբեր», հայերեն-հոլանդերեն), Ասենի հայկական միությունը («Բարև Ձեզ», հայերեն), Ռոտերդամի Սասուն մշակութային միությունը («Լրաբեր», հայերեն), Դոդրեխտի Անի մշակույթի տունը («Անի», հայերեն-հոլանդերեն), Ամստերդամի հայ առաքելական եկեղեցու հաստատությունը («Տաճար», հայերեն): Բացի այդ 1990-ական թթ. հրատարակվել են Հայաստան համահայկական հիմնադրամի հոլանդական մասնաճյուղի պաշտոնաթերթ «Հիմնադրամ» պարբերաթերթը հայերենով և հոլանդերենով, ինչպես նաև Օգնություն Հայաստանին հաստատության պաշտոնաթերթ «Հայաստան» թերթը հոլանդերենով: Տարբեր առիթներով հայկական կազմակերպությունները հայերենով և հոլանդերենով հրատարակել են գրքույկներ և զեկույցներ տարբեր թեմաներով:

Գրականություն

Սարուխան Ա., Հոլլանդան և հայերը ԺԶ–ԺԹ դարերում, Վիեննա, 1926

Աբգարյան Գ., Հայագիտությունը Հոլանդիայում, Սովետական Հայաստան ամսագիր, համար 1, 1985, Երևան

Հովսեփյան Ա., Հոլանդիայի հայորդի լուսավորիչը, Քնար ամսաթերթ, համար 14, 1985, Հաագա

Հայտարարություն Ամստերդամի հայոց եկեղեցու շենքի գնման մասին, Քնար ամսաթերթ, համար 29, մարտ 1987, Հաագա

Հայոց տառապանքները Թուրքիայում, Քնար ամսաթերթ, համար 7, ապրիլ 1985, Հաագա

Հուշաքար հայ զինվորների հիշատակին, Քնար ամսաթերթ, համար 20, մայիս 1986, Հաագա

F.A.M. Buisman, Amsterdam en de verbreiding van de Armeense Boekdrukkunst, Amsterdam 1989

S. van Rooy, Armenian merchant habits as mirrored in the seventeenth and eighteenth century in Amsterdam, Revue des Études Arméniennes, No. 3, 1966, Paris

B. Demirdjian, Met vallen en opstaan, Amsterdam, 1983